# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **09.12.2021թ.**

09.12.2021թթ. ժամը 10:00-ին ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ մաքրության ծառայության ձեռքբերման ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Իսկանդարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Գործերի կառավարիչ, |
| Ա. Ղուկասյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետ, |
| Ռ. Ներսիսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի ժ/պ, |
| Լ. Մակարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի պետ, |
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գլխավոր ինժեներ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Իսկանդարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 բողոքի քննություն կատարելու վերաբերյալ:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 բողոքի վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի Հանձնաժողովը որոշեց կասեցնել ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173 ծածկագրով ընթացակարգի գնման գործընթացը՝ բողոքարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ և ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 բողոքի շրջանակներում բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակվելու օրվան հանջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Վ. Իսկանդարյան |
| **Անդամներ** | | Ա. Ղուկասյան |
| | | Ռ. Ներսիսյան |
| | | Լ. Մակարյան |
| | | Ա. Գրիգորյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |